

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

24.12.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 57 անդամներից ներկա էին 41-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ուսումնամեթոդական վարչության 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվություն:

Զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության
պետ Բ. Պողոսյան

2. Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվություն:

Զեկ.՝ հետբուհական և լրացուցիչ կրթության
բաժնի վարիչ Ա. Սարգսյան

3. Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության
բաժնի վարիչ Ա. Մարտիկյան

4. Ընթացիկ հարց:

- 4.1 Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի հայցորդ Մարինե Համբարձումի Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց

քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.-

Ուսումնամեթոդական վարչության 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը (Ձեկ՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան):

Բ. Պողոսյանի ներկայացմամբ՝ հաշվետու ժամանակահատվածում ուսումնամեթոդական վարչության աշխատակիցներն իրականացրել են հետևյալ գործողությունները.

- ✓ ինստիտուտի ֆակուլտետների, մասնագիտական ամբիոնների հետ համատեղ վերանայել և բարելավել են առկա ուսուցման բակալավրիատի 30 և հեռակա ուսուցման 28 կրթական ծրագրերի ուսումնական պլանները,
- ✓ ֆակուլտետներ և ամբիոններ են ներկայացրել նրանց աշխատանքային պլանների մասնական ձևաչափերը,
- ✓ մասնագիտական ամբիոններին տրամադրել են ուսումնական ծավալները,
- ✓ կոորդինացրել են մասնագիտությունների կրթական ծրագրերի մասնագիտագրերի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները,
- ✓ բարելավել են ինստիտուտի փաստաթղթաշրջանառությունը,
- ✓ ստեղծել են էլեկտրոնային դասացուցակներ,
- ✓ մշակել և գործածության մեջ են դրել նոր ձևաչափով մատյանները,
- ✓ մշակել են բակալավրիատի, մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ առաջարկությունները և ապահովել դրանց իրականացումը,
- ✓ ուղղորդել են ուսանողների տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծումը, ծավալուն աշխատանքներ են իրականացրել անձնական գործերի, արխիվային փաստաթղթերի ստեղծման և պահպանման ուղղությամբ,
- ✓ համակարգել են էլեկտրոնային դասախոսությունների բազայի ստեղծման աշխատանքները:

Այնուհետև նա խոսեց 2012-2013 ուստարում առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով և մագիստրոսի

կրթական ծրագրով սովորողների ուսումնառությանն առնչվող նկարագրողական բնույթի վերլուծության մասին: Վարչության պետը նաև անդրադարձավ բուհի դասախոսների ծանրաբեռնվածությանը, ամբիոններում առկա ժամաքանակներին:

Հաշվետվության վերջին հատվածը նվիրված էր միջին մասնագիտական կրթության բաժնի և ավագ դպրոցի ծավալած գործունեության արդյունավետության գնահատմանը /Ավելին ընթերցե՛լ ուսումնամեթոդական վարչության 2012-2013 ուստարվա հաշվետվությունում:/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, պատմաբանասիրական ֆակուլտետի ղեկան Ս. Հայրապետյանը:

Ս. Ալեքսանյանի համոզմամբ՝ հաշվետու ժամանակաշրջանում ՈւՄՎ-ն իրականացրել է լուրջ աշխատանք: Նման վերլուծությունը զգաստացնում է վարչական աշխատակիցներին, քանզի երևում են մեր ինստիտուտի ուժեղ և թույլ կողմերը: Նա առաջարկեց հաշվետու ժամանակահատվածում ՈւՄՎ-ի կողմից իրականացրած աշխատանքը գնահատել բավարար:

Ս. Հայրապետյանը ևս ընդգծեց այդ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը:

Վ. Գրիգորյանը նկատեց, որ ուսումնամեթոդական վարչության ստեղծումը բուհի համար անհրաժեշտություն էր: ՈւՄՎ-ի աշխատակիցները նվիրված են իրենց գործին: Այդ մասին են փաստում կարճ ժամանակահատվածում նրանց կատարած աշխատանքից ամբիոնների վարիչների, ֆակուլտետների ղեկանների գոհունակությունը, քանզի բոլոր հարցերը կարճ ժամանակահատվածում կարգավորվում են, լուծվում: Նա նույնպես առաջարկեց ուսումնամեթոդական վարչության կատարած աշխատանքը Բ. Պողոսյանի ղեկավարմամբ գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ՈՒՄՎ-ի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- Հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի 2012-2013 ուստարվա գործունեության հաշվետվությունը (**Ձեկ.**՝ հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ Ա. Սարգսյան):

Ա. Սարգսյանի զեկուցումը վերաբերում էր հետևյալ կետերին.

- բուհում այժմ սովորող ասպիրանտների, հայցորդների բաշխվածությանը՝ ըստ կուրսերի և մասնագիտությունների,
- 2008, 2009 թվականներին ինստիտուտ ընդունված հայցորդների, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման համակարգ ընդունված ասպիրանտների քանակի ներկայացմանը,
- 2012թ. ուսումնառությունն ավարտած հայցորդների աշխատանքների արդյունավետության ցուցադրմանը,
- տարբեր ամբիոնների կտրվածքով վերջին 6 տարիներին /2008-2013թթ./ բուհ ընդունված հայցորդների և ասպիրանտների ծավալված գործունեության արդյունքների ներկայացմանը,
- կրեդիտային համակարգում սովորող հետազոտող հայցորդների և ասպիրանտների համար 2013թ. կազմակերպված դասընթացների, ինչպես նաև համապատասխան առարկաների ամփոփիչ ստուգումների կազմակերպմանը,
- հաշվետու ժամանակահատվածում երկու անգամ բուհում կազմակերպված ոչ մասնագիտական որակավորման քննությունների անցկացմանը,
- հաշվետու ժամանակահատվածում տարբեր ամբիոնների կտրվածքով հեռացված հայցորդներին,
- 2013-2014 ուստարում ԳՊՄԻ-ում հետազոտողի ծրագիրն անցնող II, III, IV կուրսի հայցորդների և ասպիրանտների համար առաջին անգամ կազմակերպված մանկավարժական պրակտիկային,

- հաշվետու ժամանակահատվածում հայցորդների և ասպիրանտների գիտական ղեկավարների վարձատրման կանոնակարգմանը,
- բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ոչ մասնագիտական և մասնագիտական վերապատրաստումների պլանավորման և կազմակերպման ուղղությամբ իրականացված նախնական աշխատանքներին,
- արտաքին կապերի բաժնի հետ համագործակցության նոր հնարավորություններին,
- բաժնի գործունեության բարելավմանն ուղղված գործնական առաջարկներին /Ավելին կարող էք ընթերցել հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի 2012-2013 ուստարվա հաշվետվությունում/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության ֆակուլտետի ղեկան Ա. Մաթևոսյանը, անգլերեն լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, ռեկտոր Վ. Գրիգորյանը:

Ա. Մաթևոսյանի համոզմամբ՝ Ա. Մարգարյանը գրագետ է, հրաշալի կառավարում է հետբուհական և լրացուցիչ կրթության բաժինը:

Ա. Հովհաննիսյանը ամբիոնի բոլոր անդամների կողմից շնորհակալություն հայտնեց Ա. Մարգարյանին, ով սկզբունքային է, ունի լսելու և հասկանալու կարողություն: Նրա համոզմամբ՝ հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի վարիչը հրաշալի է աշխատում, կոորդինացնում իրենց ամբիոնին վերաբերող բոլոր հարցերը:

Վ. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց նման դրական գնահատականների համար, որոնք փաստում են բուհի վարած ճիշտ կադրային քաղաքականության մասին: Նա լուրջ նվաճում համարեց ոչ մասնագիտական որակավորման քննությունների օբյեկտիվ անցկացման ապահովումը:

Ռեկտորն առաջարկեց հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՒՆ.-

ԳՊՄԻ-ի հետբուհական և լրացուցիչ կրթության բաժնի 2012-2013 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՒՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՒՆ.-

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի 2012-2013 ուստարվա հաշվետվություն (Զեկ.՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Ա. Մարտիկյան):

Ա. Մարտիկյանի ներկայացմամբ՝ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատանքներն ընթացել են ներքին և արտաքին հաղորդակցության, ինստիտուտին վերաբերող հրապարակումների վերլուծության, բուհի վարկանիշի բարձրացման, ամենշաբաթյա սեփական հեռուստածրագրի պատրաստման և հեռարձակման, տեղեկատվական ամսագրի ստեղծման և հրատարակման, լրագրության բաժնի ուսանողներին մասնագիտական, գործնական հմտությունների ուսուցման, համացանցային տիրույթում ԳՊՄԻ-ի վերաբերյալ տեղեկատվության և տեսանյութերի տարածման, ինչպես և մի շարք այլ ուղղություններով:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչը առանձին խոսեց բաժնի ինչպես ձեռքբերումների, այնպես էլ հիմնական թերացումների և դրանց օբյեկտիվ պատճառների մասին:

Հարկ է գնահատել նաև բաժնի աշխատակիցների կողմից մշակված ռազմավարական պլանը /Ավելին կարող եք ընթերցել հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի հաշվետվությունում/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՒՆ.- Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. մարդոյանը

Ռ. Մարդոյանը նշեց, որ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատակիցները միշտ պատրաստակամ են օգնել

Ֆակուլտետային մակարդակի միջոցառումների լուսաբանման հարցում:
Կարճ ասած՝ բաժնի աշխատողները հրաշալի են կատարում իրենց
աշխատանքային պարտականությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի 2012-2013
ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար և
որոշման նախագիծն արված առաջարկություններով հանդերձ ընդունել
հիմք:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամներ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարց:

4.1 ԼՍԵՑԻՆ.- Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի հայցորդ
Մարինե Համբարձումի Առաքելյանի թեկնածուական ատենախոսության
թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին (**Հաղ.**՝ Գիտության
և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Հաստատել՝ մանկավարժության և սոցիալական աշխատանքի
ամբիոնի հայցորդ Մարինե Համբարձումի Առաքելյանի թեկնածուական
ատենախոսության՝ «Մանկավարժների մեթոդական միավորումների
գործունեության կատարելագործման հիմնախնդիրը ժամանակակից
դպրոցում» թեման ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և
պատմություն» մասնագիտությամբ:

2.Գիտական ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների
դոկտոր Ռ. Մարդոյանին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 41 անդամ. կողմ՝ 41, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան